



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



1787  
1788  
1789

1790  
1791  
1792

84  
F-96







891.99-2

ԿԿ

Ա Ֆ Ֆ Բ Փ Ա Տ Տ :

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ :

Յ ա ր ա յ

Յ Օ Ր Ի Ւ Ե Ա Յ ,

Պ. Ս Ա Ր Գ Ի Ս . Մ Ա Ր Գ Ա Ր Վ Ա Ն Ա Ն Դ Ե Ց Ե Ա Ն :

Ա Բ Ա Տ Ա Խ Ե Թ Ն Ո Ւ Թ Ե Ը Մ Բ Մ Ե Ւ Ա Յ Ա Ր Դ Ե Ւ Ք  
Գ Ր Ի Գ Ա Ր Ա Վ Ա Յ Վ Ա Ր Վ Ա Ր Ա Յ :



Կ Ո Ս Տ Ա Ր Ե Ո Ւ Պ Ո Ւ Ւ :

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Հ . Գ Ա Յ Օ Լ Ի :

1858

564

25.7.87  
1868 Aug 18  
P.W.H.

7887-57  
✓

2681

Ապահովութեալ և աղքատէր Գրիգոր աղայ Քեհըլաբճեան

Բարեկարգանք Տեր :

Առ-ըսպիր ի-ըաւանկե-ր լո-սա-ս-որեալ աղքաց մէջ  
նա-սորեւ գո-նե-անց վրայ եղած ին-սոմունեցը և հո-դա-պարո-  
նի-նե-նեցը , և այս նի-նոյս վրայ ո-նեցած մշտ հա-մակո-  
նի-նե-նին՝ պա-լէ յայ-դա-րար մըն է այս աղքա-պական արհե-  
տին ո-սա-մանց և բարեկարգու-նե-անց նա-սո-սո-սա-ս-որ ըլլա-լո-ն ,  
զըն որ ը-սո օրէ ա-լ ա-ս-ե-լէ կա-պարելո-նե-ան ծայրը հա-  
ցա-լո-ն-է կ-ա-շ-լ-ա-պ-ին : Բայց գո-հա-ցո-ցի-է ո-ե-ն-ե-լ , Ա-ց  
գա-յ-ն-ո-ց մ-շ-տ-ո-յ-ն և լո-ս-ս-ո-ր-ե-ա-լ մա-սին մա-ս-ա-ն-ի այս  
վե-զ-ք-ն ո-ս-ս-ո-յ-ս մէջ ա-ս-ա-ն-յ-ն-ա-ի ը-ս-ա-ծ կա-մ ը-ն-ե-լո-ս ո-ի-ր-ո-  
վ-ա-ս-ո-ա-ծ + ա-ն-ի մը նա-կ-ա-կ-ն-ա-կ-ա-ն ո-կ-ը-ո-ո-ն+ն-ե-ց-ը . ո-ր-ո-ց մէջ  
+ ա-ն-ի-ն ա-լ ա-ր-դ-է-ն ե-ս ի-ս-ի ն-ե-ր-կ-ա-յ գ-ա-ն-ո-ա-ծ , և պ-է-ր-է-ն+  
+ ա-ր-ա-լ-ո-ւ-լ-ո-ս- պ-ա-ս-է-ր ո-ն-ե-ց-ա-ծ է-մ : Խ-ր-ա-ն-է ն-է ո-ր-զ-ա-ք  
կ-ա-ր-ե-լ-է և շ-ս-ո ծ-ա-գ-է-ր ա-յ-ն ձ-ա-յ-ի-ս-պ-ա-ն-ց ա-ս-ե-պ-ա-բ-է-ց օ-ր-ը .  
ո-ր-ո-լ և Ա-ց-ն ա-լ մ-ա-ս-ա-ն-ո-ր Թ-ա-ս-ո-ր-ո-ն մը , ո-ս-ս-ո-մ-ա-կ-ա-ն  
ա-ր-ա-ր-ա-ն-ն-ե-ց-ո- ն-ո-մ-է մը , և ա-ղ-ք-ա-յ-ն- վ-ս-է-մ ա-ր-ա-ր-ա-ն-ն-ե-ց  
ն-ե-ր-կ-ա-յ-ց-ն-ե-լ-ո- ք-ա-փ-ա-տ-է-լ-է մ-է-լ-ո-յ-ը ս-ո-ս-ա-ն-ա-յ-ը :

Ապահովութեալ ի-ս-ե-լ-է և որ զ-մ-ը մ-է ք-ա-փ-ա-տ-է-ն հ-ա-ս-ո-ց-ը-ն-է :  
Ո-ս-ո-լ ա-յ-ս յ-ս-ո-ս-ո-ր-ը-ն-է հ-ա-մ-ո-պ-ա-մ-է , Ա-ղ-ք-ա-տ-է-ր պ-է-ր , ե-ս  
ի-մ կ-ո-ղ-մ-ա-ն-է-ս ո-կ-ը-ն-ո-շ-ս-է-ն-ը մը ը-ն-ե-լ-ո- հ-ա-մ-ա-ր , ա-ր-դ-է-ն շ-ս-ո-  
գ-ա-մ-ա-ն-ա-ի լ-է-ա-յ ո-ր ը-ս-ո կ-ա-ր-ե-ա-ց ե-ց-ի-ո- ն-ա-ր-ը-ւ գ-ո-ն-ե-ց-ը  
պ-ա-պ-ր-ա-ս-ո-ա-ծ է-ի . (Ե-ա-ց ի- ն-ա-ր-գ-մ-ա-ն-ո-ն-ե-ա-ն-ց ) ո-ր-ո-ց ս-ո-ս-

զնու և երկրորդը արդեն Առաջաշրջութ Աղքատին ճը ար-  
պիտամբ մամլոյն յանձնուած են . բայց և այն երրորդ  
ՄԻԶԲԻԱԾ սկզբանութեան . Ձեր Առեժարդոյ Առ-  
ժամանին լուսունուիլը , և զայն Ձեր արդեամբ և  
ժայիր+ աղաքիրել ասաւ ովրայօժար իափափնէր , ա-  
լորդ և ըսել նէ +անէ իրակոյս և +ազալելունին ովրայ  
վրայ նուասովիս , այս օդապահար ուսուածին յեւ+էն եկածին  
զաք արդիւնասութեաւ համաս դեւ ունել նորանոր ժոր-  
յեր աւ ընելու :

Ա-աղի այն +աղջրին յու-սուլ նէ ինչպէս ո՞յ մը այս  
ընդուն նուերը աղքատիրաբար ընդունեցատ զայն աղաքիրել  
ասաւ գովուլ իափափուլ , նոյնպէս Աղքային+ աւ ովրայ  
ընդունեն ա-լու պուղըն ուղարին նայելուլ +ան նէ պու-  
ժին շափուն . իամ և համար հանդելք հաստափեօտ ախտաժա-  
կան յարգանաց . և իուրին շնորհաղարդ :

ՁԵՐԴ ԲԱՐԵՆԱԽԱՆՉ ԱԶՆՈՒՈՒԹԵԱՆ  
ԿՈՆԱՐՀ ԾԱՌԱՑ

Պ. Արդիս Տ. Արդար Վանանդեցեան :

# ՄԻՃՐԴԱՏ :

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ :

## Ա Ն Ձ Ի Ն Ֆ

- ՄԻՃՐԴԱՏ . ՎՐԵԱԿՅՐ ՑԻԳՐԱՆԱՅ , և իշխան ՊՈՆՏՈՍԻ :  
ՓԱԹՆԱԿԻՍ . Արդի ՄԻՀՐԴԱՄԱՅ :  
ՄԻՃՐԴԱՏԻ :  
ՆԻԽՍՍԱ . { ՄԻՀՐԴԱՄԱՅ աղջիկները :  
ԶԱՀՐԱ .  
ՓԱԹՆԱԿԻ .  
ԱՐՏԱՇԵՄԱ . ՄԻՀՐԴԱՄԱՅ կինը :  
ՍՈՎՈՐԻՆ . Հարձը :  
ԱՏՏԻՂԱՈՍ . Հոռմայեցի Ծերակուտի անդամ :  
ԱՐՃԱԿԻՍ . Օօրագլուխ ՄԻՀՐԴԱՄԱՅ :  
ՄԻՃՐԱՆ . Պալատական :  
ԶԱՐԻՀ . Ասորին պալատական :  
ԱՐՏԱՇԵՄԱ . Օաքեհի հօրեղբօր աղջիկը :  
ՏԻՄՈՅ . Բաժիկ :  
ԵՐԵԳՈՑՆ . Ենձնապահ պաշտօնակալ ՄԻՀՐԴԱՄԱՅ :  
ՀՐԱԶԵՆՅՅ . Դաշիճ :  
ԲԻՏԻՏՈՍ . Գաղղիացի զօրական :  
Օյնուորներ պահապաններ ևայլն :

Արագածոտն Արտավազ Արտավազ Արտավազ Արտավազ Արտավազ  
Պահապաններ Պահապաններ :

# ԱՐԱՐԱՏԻ ԱՅ. Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա:

ՊԱՏԵՐԱՋՄԻ ԴԱՇՏԸ:

ԱՐՀԵՐԴՄԱԴ և ԱՐԱԴՈՒՐԻ ՀԵՐԱՆԻ մէջ, և ԵՐԵՎԱՆ ՊԱՆԱՊԱՆՆԵՐԸ ուն առ  
հետո իւ իւնան: ԱՐՀԵՐԴՄԱԴ ՄԵՂԱՆԻ մը ՀԵՐԱ ԿՈՐԱԾ իւ  
ՔՐԵՑԵԼ, և ԱՐԱԴՈՒՐԻ սուրէ ՀԵՐԱ:

ՄԻՀՐԴԱՏԱՏ. Արագոտն, այս նամակը որ մեծն Տիգրանայ կը  
զըկեմ, քու վըսյօքդ շատ գովութիւններ կը  
պարունակէ, և կը յուսամը որ անկից ալ արժանի  
վարձատրութիւն մը կը գտնես:

ԱՐԱԳՈՏՆ. Տէր իմ, եթէ հօր թագաւորէ մը և անոր հմուտ  
ու քաջուժեղն սպարապետէն վարձատրութու  
արժանաւորութիւնը ունենայի, յիրաւի մեծ ան-  
համբերութեամբ պիտի սպասէի նոյն պատռոյ:  
Բայց հիմա եթէ ըրած և ընելիք գործերս ու-  
նեցած պարտաւորութեանս հետ բաղդատելու  
ըլլաք, հաւաստի' եղիք տէր իմ, այնպիսի  
գործ մը պիտի չկրնաք դտնել որ պարտաւո-  
րութենէս աւելի ըլլայ, հետեւաբար վարձատ-  
րութեան ալ արժանի:

ՄԻՀՐԴԱՏԱՏ. Արագոտն, կ'ըսեն թէ Արշակոնի լեզուները գրա-  
ւող կ'ըլլան, ստորյգ է:

ԱՐԱԳՈՏՆ. Շմարտախօս լեզուները միշտ գրաւող կ'ըլլան,  
տէր իմ:

ՄԻՀՐԴԱՏԱՏ. (Որուի ՀԵՐԱ ելնելով սուս իւ Քայէտայէ) Ատոյդ է:  
Բայց գուն ապահով եղիք որ Միհրդատ ի-  
րեն հաւասարիմ ծառայողները անվարձ չը թո-  
ղուր:

ԱՐԱԳՈՏՆ. Արդէն այդ աղնիւ խօսակցութիւնը ինծի համար  
վարձատրութիւն մ'է:

ՄԻՀՐԴԱՏԱՏ. Արագոտն. փոխէ այդ Արշակունի գրաւիչ լե-  
զուիդ ընթացքը:

ԱՐԱԳՈՏՆ . Տէր իմ, լեզուես աւելի փոփոխութեան կարօտ  
բան մը կը կրեմ:

ՄԻՀՐԴԱՏԱՏ . Եւ ի՞նչ է:

ԱՐԱԳՈՏՆ . Ենունս :

ՄԻՀՐԴԱՏԱՏ . Ենուանդ վրայ պէտք չես գանդատիլ :

ԱՐԱԳՈՏՆ . Եցնապէս ալ լեզուես ուրեմն : Իայց ես կըսեմ որ  
եթէ վերսախն ծնանիլ հնար ըլլար, շատ եր-  
ջանիկ պիտի ըլլայի անունս Միհրդատ դնել  
տալով :

ՄԻՀՐԴԱՏԱՏ . Հա՛, հա՛, հա՛, յիրաւի այդ լեզուովդ մարգս շատ  
կը զուարձացնես : Խնչո՞ւ համար այդ կերպ լե-  
զու մը ես ալ չեմ կրեր :

ԱՐԱԳՈՏՆ . Խնչո՞ւ համար այդ կերպ անուն մը ես ալ չեմ կրեր :

ՄԻՀՐԴԱՏԱՏ . Իարի . զքել Միհրդատ Արագոտն կը կան-  
չեմ ասկէց վերջը . բայց դուն ալ քու լեզուդ  
իմ վրաս փոխադրել պէտք ես :

ԱՐԱԳՈՏՆ . Եւ ես առանց լեզուի՞ մնամ :

ՄԻՀՐԴԱՏԱՏ . Հա՛, հա՛, հա՛ :

ԱՐԱԳՈՏՆ . (Ուսեբը վեր վերցնելը) Ի՞նչ դարմանալի բան .  
քսան երկու լեզու ունեցողը\* միայն մէկ լեզուի  
մը հարկաւարութիւն կրնայ ունենալ :

ՄԻՀՐԴԱՏԱՏ . (Խոնդալը) Իայց իմ բոլոր ունեցածս լեզուներուն  
մէջ ատանկ մէկ հատ մը ստուգիւ չգտնուիր :

ԱՐԱԳՈՏՆ . Ուրեմն ըսել կ'ուզէք թէ արմատէն կտրուելու  
արժանի լեզու մ'է :

ՄԻՀՐԴՐԱՏ . Խնչո՞ւ :

ԱՐԱԳՈՏՆ . Հապա քսան երկու ընտրեալ լեզուներու մէջ  
չգտնուող և անոնց բարի յատկութիւնները չ'ու-  
նեցող լեզուն անշուշտ դէշ լեզու մը կ'ըլլայ .  
հետևաբար խլելու արժանի :

ՄԻՀՐԴՐԱՏ . Յիրաւի այսօր զիս շատ զուարձացուցիր . Արագոտն ,  
Հիմա կ'ուզեմ քիչ մը հանգստանալ . և դուն  
այս նամակը մէկուն յանձնէ որպէսզի մեծն Ցիդ-  
րանայ ձեռքը հասնի . անկէց վերջը պահապա-  
նաց պատուիրէ աղէկ զգուշութիւն ընել : Օօր-  
քերը անհոգ չկենան . որպէսիւտե Տըրիարիու

\*Կ'ըսեն թէ Միհրդատ 22 տարբեր լեզուներով կը խօսէր :

**թէպէտ և յաղթուելով ետ քաշուեցաւ, բայց  
ապահով եմ որ գարձեալ վրանիս կը յարձակի  
մինչև բոլորովին ցրուիլը :** Արդէն կիշերը վրայ  
հասած է. զօրքերուն հանգստանալու հրաման  
տուր, պահապանները թշնամեաց բանակը աղէկ  
դիտեն :

**ԱՐԱԳՈՏՆ. Համա աղէկ տէր իմ. անհոգ եղիք :**

**ՄԻՀՐԴԻՏՆ. Եցնպէս վրանիս առջեսի պահապանները՝ մոռնաս :**

**ԱՐԱԳՈՏՆ. Ես անձամբ կը հսկեմ :**

**ՄԻՀՐԴԻՏՆ. Ուրեմն զիշեր բարի :**

**ԱՐԱԳՈՏՆ. Բարի հանգստառթիւն . տէր իմ :**

(Այնուամբ վրանին ներսու իւ մոռնէ)

**Ես ալ երթամ տուած պատուերները կատարեմ.**  
Բնչ վեհանձն ոգի մը ունի. հետը խօսեցածս  
ժամանակ չեմ ուզեր քովէն զատուիլ: Երթամ  
շուտով ընդունածս հրամանները կատարեմ ու  
գամ պահպանութիւն ընեմ վրանին առջեւ:

(Այսուհետեւ իւ մէննէ)

**(Դիուրէն) Պաշտօնականներ, հարիւրապետներ. պահպան-  
ները փօխուին, գունդերուն հրաման տուեք զին-  
եալ հանգստանալու :**

(Փողերը իւ աւագունն)

### ՏԵՍԱՐԱԿ :

ՈՒԹ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ ԶԻՆԵԱԼ ՏԱՄԵԱՊԵՏԻ ՄԵ ՀԵՏ ԿԸ ՄՇՏԵՆ :

**ՏԱՄԵԱՊԵՏ. Կա՞ :**

(Պահապանները իւ խայնին, Տամեապետը անոնցի երկու-  
ու վրանին եւիու իոդը իւ խայնեցընէ, մես եր-  
կուան ալ իոդնանի վրը վար իւ ուլնէ: Աւզի ու-  
հապանները մնացած վրին հետ իւ մէննան:)

**Արթէնն հսկեցէք. պարապետին հանգստառթիւնը  
խանգարող արգելք մը չը տարք :**

(ՈՒՅԱ պահողական դատավորութեան)

Յառաջ ՚ի յաջ :

(Տեսաբանէն աջ կողմէն էւնընէն :)

Ա ՊԱՀԱՊԱՆ . Կ'երեայ թէ տէրելնիս կը ննջէ :

Բ ՊԱՀԱՊԱՆ . Ա, յու և առողմալու ձայնը կ'առնում :

Ա ՊԱՀԱՊԱՆ . Ձէքպէտ և տարիքը առածէ , բայց ի՞նչ աշխայք ու վեհ կերպարանք մ'ունի . իրաւամբ խօսեցաւ այն Հռովմայեցի գերի բոնուած զինուորը թէ , Հռովմայեցիք պատերազմի դաշտին վրայ ինչ ատեն Միհրդատայ դէմքը տեսնեին սրտերնին կը դողար :

Բ ՊԱՀԱՊԱՆ . Բայց իր զօրաց հետ ալ ի՞նչպէս անուշութեամբ կը վարուի : Աը յիշեմ անգամ մը ինչ ատեն Հռովմայեցւոց դէմ պատերազմ կուտար . գիշեր մը դարձեալ իմ կարգս եկաւ անոր վրանին բոլորակը հակելու , ուստի կէս գիշեր ժամանակ ինչ ատեն վրանէն գուրս ելնելով մէկ քանի ընկերներովս զիս ոտքի վրայ կայնած տեսաւ . ներեցէք , բարեկամներ , ըստ , որ ձեր հանդըստութեան արգելք կ'ըլլամ , որովհետև երիտասարդութիւնը . ժամանակին քնանալ կ'ուզէ , բայց յաւելցուց . պատերազմէն վերջը զձեզ անվարձ չեմ թողուր : Եւ իրօք հետևեալ օրը Հռովմայեցւոց վրայ փառաւոր յաղթութիւն մը ընելով մեզի հարիւրական դաշնէկան բաշխեց :

Ա ՊԱՀԱՊԱՆ . Ասանկ վեհանձնական գործեր շատ ըրած ունի : Հռովմայեցիք կը պարծին թէ իրենց զօրապետները աւելի հարուստ և առատաձեռն են . կը յիշեն անգամ մը ինչ ատեն Միհրդատ տէրելնիս Լեսրացւոց ձեռքէն Ակուիլոս Մանիոս Հռովմայեցի իշխանը առնլով անոր շատ կերպ նեղութիւններ տալին վերջը , ոսկի հալեցնելով կոկորդէն վար լեցնել տուաւ , իմացնել ուզելով թէ Հայերը Հռովմայեցիներէն աւելի հարուստ և աւելի առատաձեռն են :

Բ ՊԱՀԱՊԱՆ . Ա, յո՛ , Պերգամնի մէջ , և Հռովմայեցիք սաստիկ բարկանալով դարձեալ պատերազմ հրա-

տարակեցին, բայց չարաշար յաղթուելով ցի-  
րուցան եղան :

**Ա ՊԱՀԱՊԱՆ.** Որովհետեւ մեզի անանկ մէկ զօրապետ մը կը հըա-  
մայէ, որ եթէ բոլոր Հռովմայեցիք զօրապետ  
դառնան, դարձեալ ընելու գործերնին չարա-  
շար յաղթուելով ցիրուցան փախչելն է :

**Բ ՊԱՀԱՊԱՆ.** Բայց շիտակը ըսելու համար Հռովմայեցիք ալ ա-  
ղէկ կը պատերազմին :

**Վ ՊԱՀԱՊԱՆ.** Զեմ ըսեր թէ գէշ կը պատերազմին, բայց մեզի  
հետ հաւասար չեն կրնար ըլլալ :

**Շ ՊԱՀԱՊԱՆ.** Ենտարակոյս չէ :

**Դ ՊԱՀԱՊԱՆ.** Ոտքի մը ձայն կը լսեմ:

**Դ ՊԱՀԱՊԱՆ.** Օդուշութիւն :

(Երիսու + այլու առանապահները նիշակնին բունած կը կայնին :)

(Վրաֆորն էլ ճանել :)

**ԱՐԱԳՈՏՆ.** Տէրերնիս կը ննջէ :

**Գ ՊԱՀԱՊԱՆ.** Ե՛յո՛ :

(Վրաֆորն յառաջ էսու բայ :)

**ԱՐԱԳՈՏՆ.** (Ե. պահապահնին) Ինարեկամ, միւս պահապահ-  
ները փոխուեցա՞ն :

**Ա ՊԱՀԱՊԱՆ.** Ե՛յո՛ պարո՞ն :

**ԱՐԱԳՈՏՆ.** Ինրի, շշուկ մը չհանեք, արթուն կենաք : Իսկ  
ես քանի գիշեր է անքուն կենալով՝ քիչ մը սա  
ժայռիս վրայ հանգստանալ կ'ուզեմ:

**Բ ՊԱՀԱՊԱՆ.** Ե ան աղեկ պարո՞ն, ան հոգ եղիք :

**ԱՐԱԳՈՏՆ.** Ուէպէտ ինձ ալ հարկ եր սպասել, բայց աղեկ  
գիտեք որ քանի գիշեր է զլուխս վար դրած  
չեմ. ուստի կ'աղաշեմ որ ձեր պարտաւորութեան  
մէջ արթուն կենաք : Արդէն կէս գիշեր երկու  
ժամ անցած է :

**Ա ՊԱՀԱՊԱՆ.** Եպահով եղիք պարո՞ն, տէրերնիս արթնցած ժա-  
մանակ զմեզ ուտքի վրայ պիտի գտնէ :

**ԱՐԱԳՈՏՆ.** Ուրեմն հանգիստ սրտով կը պառկիմ :

(Կաելուրդը իւ հանէ գլուխուն + ուշ էլ դնէ, նոյնուհետ վա-  
հանը ու նիշակը, և գլուխը ժոյտի մը վրայ դնե-  
լով էլ ննջէ :)

Ճայռերու վրայ մարդս աւելի հանգիստ կը քնա-

- նայ, քանի թէ փափուկ և կակուլ անկողիններու մէջ:
- Բ ՊԱՀԱՊԱՆ. Կութիւնը կարծես թէ աւելի սաստկացաւ, ետեւ նայէ անգամ մը ի՞նչ սոսկալի մութէ է:
- Ա ՊԱՀԱՊԱՆ. Կարծես թէ բոլոր աշխարհիս վրոյ ուն քօղ մը ծածկուեր է: Վրագուն ալ սկսաւ խորունկ քնոյ մէջ մտնել:
- Բ ՊԱՀԱՊԱՆ. Դրաւոնք ունի, որովհետեւ սպարապետին քովին ամենեին չ'զատուիր, գիշեր ցերեկ, պատերազմի և խաղաղութեան մէջ միշտ հետն է, և հարկաւ շատ կը յոդնի:
- Ա ՊԱՀԱՊԱՆ. Ի՞այց Միհրդատ ալ ի՞նչպէս շատ կը սիրէ զայն:
- Բ ՊԱՀԱՊԱՆ. Ենցուշտ անանկ հաւատարիմ անձը կը սիրուի:
- Ա ՊԱՀԱՊԱՆ. Կը յուսանս որ մենք ալ Միհրդատայ օր մը ասանկ սիրելի ըլլանք:
- Բ ՊԱՀԱՊԱՆ. Խնջո՞ւ չէ, քանի որ իրեն հաւատարիմ ծառայութիւնը ընենք:
- Ա ՊԱՀԱՊԱՆ. Ես ալ գոնէ հարիւրապետ մը ըլլալու շատ փափ ունիմ, որպէս զի իմ իշխանութեանս տակ եղաղ զինուորները աղէկ կառավարեմ:
- Բ ՊԱՀԱՊԱՆ. Ժամանակը ի՞նչ ըրած չէ որ ադ պիտի չընէ, բայց կարծեմ գիշերուան մեծ մասը անցաւ: Ենանկ կ'երևայ. կը կարծես որ դարձեալ պատերազմը ընենք:
- Ա ՊԱՀԱՊԱՆ. Ենցուշտ, եթէ զօրապետին միտքը պատերազմիլ չըլլայ, ինչո՞ւ համար զօրքերը դաշտերուն վրայ պիտի հանգստացընէ:
- Բ ՊԱՀԱՊԱՆ. Տեսնենք: (Կը լուն:)
- (Պահապէն աղաղակ, ինքուի, քու)
- Բ ՊԱՀԱՊԱՆ. Ես ի՞նչ է:
- Ա ՊԱՀԱՊԱՆ. Պատերազմի նշան:
- (Արագուոն յանկարծ կ'ար իննայ ու նիշտիւ առնելով գեղուի ու ուսուր կը մասէ: Քայլող պահապանները նեպես նին լորով պարբառու կը իննան, վրանին ու մէկ պահապաններն ալ նիշտիւն ու լուզով կը իննան:)
- Ա ՊԱՀԱՊԱՆ. Երդեօք իմաց տանք, պատերազմի նշան է:
- (Պահապէն մի և ույն յայն: Արագուոն ինըն:)

**ՄԻՀՐԴԱՏԸ**. Կ՞նչ ձայն է ան, բարեկամներ :  
Բ ՊԱՀԱՊԱՆ . Տէր իմ, պատերազմի նշան է :

(Վահագողն իւ ճանէ :)

**ԱՐԱԳՈՏՆ**. Տէր իմ, Տրիարիսով վրանիս կը յարձակի, պատերազմի նշանը տրուած է :

**ՄԻՀՐԴԱՏԸ**. Շատ բարի, պատուիրէ ամենքնին ալ պատրաստուին :

(ՈՒիհրդադր վերանդ իւ ճանէ :)

**ԱՐԱԳՈՏՆ**. (Դաստին) Եմ մարդ զինաւորի՛, պատերազմի նշանը տրուելուն պէս պատրաստ ըլլան ձեր նետերը թշնամոյն սիրտը մանելու . գունդերը կաղմուին :

(Վահագողն վերադին իւ ճանէ :)

**ԱՐԱԳՈՏՆ**. Դեռ չ'լուսցած պատերազմի նշանը տալ, չիմա, չիմա այդ յանդգնութեան պատիմը կ'առնուք :

(ՈՒիհրդադր վերանդ իւ ճանէ :)

Տէր իմ, պատուերնիդ կատարեցի :

**ՄԻՀՐԴԱՏԸ**. Պատրաստ են զօրքերը :

**ԱՐԱԳՈՏՆ**. Եյո՛ տէր :

**ՄԻՀՐԴԱՏԸ**. Ուր է ձիս :

**ԱՐԱԳՈՏՆ**. Աարի ուրեմն :

(ՈՒիհրդադր պահապաննէրն իւ ճանէ, դուռըն երաժըռագունին : Օքրէւերը ուեսարանին երեւէն իւ անցնին :)

(Դաստին) Գառնդերը կաղմուին :

(Քանի մը ուերէ իւ իրինուի : Վահագողն աղեղը իւ լորէ ու ժայռի մը երեւէ իւ ներուէ :)

Յառաջ, յառաջ :

(Քանի մը ուերէ իւ իրինուի :)

**ԱՐԱԳՈՏՆ**. Ուուչուն ըլլաք փախչէք դարձեալ նէտս ետևնէդ պիտի համնի :

(Ուրել ժամ իւ ներուէ, ու նիշակը առնընջ յառաջ իւ կազէ :)

- ՄԻՀՐԴԱՏ.      Պաշարեցէք, հուտ, յառաջ, յառաջ:  
ԱՐԱԳՈՏՆ.      (Օդնութիւն ԱՇԽՐԴատայ) :
- (Ա աղբլով ածառանեն անյայտ ի ըլլոյ :)
- ԱՐՃԱԿԵՍ.      (Դաստին) Օօպքերը ետ քաջուին, գաղրին պատերազմելէ:
- 

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՐՃԱԿԵՍ ՏԻՄՈԹ ԵՒ ՄԻՀՐԴԱՏ ԵԶԴԻՐԸ ԿԱՊԱԾ ՈՒ ԱՐԱԳՈՏԻՆ  
ԿՐԹՆԱԾ ԿԲ ՄՇՍԵՆ ՊԱՇԱՎԱՆՆԵՐՈՎ :

- ՏԻՄՈԹ.      Տէրիմ, աղեկ կ'ընէք թէ որ վրաննուդ մէջ քիչ  
մը հանգստանալու ըլլաք . որպէս զի վէպքերնիդ  
դարմանեմ :
- ՄԻՀՐԴԱՏ.      Հատ գէշ կը ցաւի . Տիմօթ :
- ՏԻՄՈԹ.      Եցն ցաւը հիմնյ կ'անհետանայ տեր իմ . միայն  
թէ քիչ մը վրանին մէջ հանգստացիք :
- ՄԻՀՐԴԱՏ.      Բայց պատերազմը շարունակեն . թշնամին բոլոր  
րովին հալածեն :
- ԱՐԱԳՈՏՆ.      Տէրիմ . անհոգ եղիք :
- ՄԻՀՐԴԱՏ.      Արշակէս . այս վէպքը ինձի շատ սուզի նստառ .  
պէտք էր յաղթութիւնը բոլորովին ընելէն վերա-  
ջը այս վէպքը առնուլ : — Ո՞վ բաղդ, ին-  
չո՞ւ հաճար քու տուածդ փառքերուն և ուրա-  
խութիւններուն մէջ դառնութիւն մ'ալ կը խառ-  
նես , եթէ կ'ուզես որ այս պատերազմի փա-  
ռաւառը դաշտին վրայ՝ քու շնորհածդ փառ-  
քերուն հետ մէկսեղ իմ կեանք ալ վերջա-  
ցնես , եթէ կ'ուզես որ ձառվիմյեցւոց սրտե-  
րուն մէջէն Միհրդատայ վախը բոլորովին փա-  
ռատես , ուրեմն շուտ ըրէ , կատարէ՛ կամքդ .  
ասիկայ ինձի վախ մը չպատճառէր , մանաւանդ  
թէ քու տուածդ պատիւններուն վրայ ուրիշ  
մ'ալ կ'աւելցնես , և իմ հայրենակցացս բեր-  
նէն այս պատռաւառը խօսքերը արտասանել կու

տաս, թէ ԱՄիհրդաստ քաջութեամբ թշնամւ եաց հետ պատերազմելով կը յաղթէ ու կը մեռնի": — Տիմոթէ, եթէ վերքս մահացու է, մի պահեր, խօսէ՛ յայտնապէս, որ նս ալ իմ վերջին խօսքերս արտասանեմ:

- ՏԻՄՈԹ.** Զէ տէր իմ, ամեննին վախս մի ունենաք:  
**ՄԻԿՐԴԱՍ.** Ա ախս չ'ունիմ, բայց եթէ մահացու է՝ շիտակը խօսէ՛, որպէս զի այս յաղթութեան ասպարից զէն ընտանեացս իմ վերջին ու յափտենական հրաժարականս տամ. խօսէ՛ շիտակը Տիմոթէ:  
**ՏԻՄՈԹ.** Տէ՛ր իմ. ստուգիւ վերքերնիդ ծանր է. բայց չէ՛ թէ վասանգաւոր. հաճեցէք ձեր վրանին մէջ հանգստանալու, ու ես պիտի աշխատիմ որչափ որ կարելի է շուտով աղէկցնելու:  
**ՄԻԿՐԴԱՍ.** (Արտապատին իրնառք որեպ ՚ի վասնը երթալով) ԱՌշակէս, զօրաց կառավարութեան աղէկ հոգ տանիս. իմ վիրաւորիլս անսնց չիմացնէք:  
**ԱՐՃԱԿԵՍ.** Ենչոգ եղիք. տէր իմ:

(Ամենավագ և Տիմոթ վրանը իը հրանեն:)

Երթամ զօրաց քոյլ. երանի թէ դէշ հետեւութիւն մը չ'ունենար:

(Իւթէնին:)

- ԱՐԵԳՈՏՆ.** Եղէ՛կ յանդգնութիւն... ԱՄիհրդատայ վրայ սուր վերցնելու համարձակի. բայց ինքն ալ կտոր կտոր եղաւ: Եթէ քիչ մ'ալ առաջ հասնէի անշուշտ չէի թողուր որ հաստաբազուկ սպարապետի մը հարուած տալու յանդգնութիւնը ունենայ. բայց ինչ և իցէ. (Գաղաքանը ցուցնելով:) Թէպէտ զինքը չէի ճանչնար, գոնէ անոր խրոխտ արիւնը գաշցնիս վրայ դրոշմեցի. և գարձեալ կերպնում, որ եթէ մէկը ԱՄիհրդատայ վրայ սուր վերցնելու յանդգնի, այս գաշցնս անոր անարդ սիրաը մանելով պիտի իլէ զայն:

(Տիմոթ իւնեն վրանեն:)

Ենչոգէս եղաւ. պարո՞ն բժիշկ:

ՏԻՄՈԹ .  
ԱՐԱԳՈՏՆ .  
ՏԻՄՈԹ .  
ԱՐԱԳՈՏՆ .

Աղէկ վիճակի մէջ է :  
Ուրեմն վասնդաւոր չէ վէրքը :  
Չէ ամեննեին : Աղէկ կ'ընէք թէ որ քիչ մը քովը  
երթալու ըլլաք . որովհետև առանձին է և ձեզմէ  
կ'ախորժի :  
Կ ատ աղէկ . ասկէց հաճելի գործ մը չը կրնար ըլ-  
լալ ինծի համար :

(Ա բանը իւ հոնէ :)

ՏԻՄՈԹ .

Աղջրը որ բաւական վիրաւորուած է , կապելու  
ժամանակ և ոչ անդամ շըուկ մը հանեց . և  
կ'ուզէ այս վիճակին մէջ դարձեալ պատերազմի .  
ասանկ անվեհեր ու քաջ սիրո ունեցող անձ մը  
երբէք տեսած չունիմ ես : Հայու արի ւն կը  
կրէ իր ազնիւ երակներուն մէջ . մահուանէ  
չվախնար . դիպուածական վշտերը բանի տեղ  
չդներ . և շատ անդամ պատերազմի մէջ իր  
վինարդներէն մէկը տեսնէ որ վիրաւորուած է ,  
անձամբ անոր վէրքը կ'երթայ կը կապէ . բարե-  
կամօրէն կը խօսի հետը . քաջալերութիւններ  
կ'ուտայ : Ասոնք ամենազնիւ բնութեան մը չնաշ-  
խարհիկ յատկութիւններն են : Բռնդ պարծի Հա-  
յաստան , որ այս դարուս մէջ ասանկ երկելի դիւ-  
ցաղն մը աշխարհիս ցցց տուաւ . թո՛ղ պարծի ի-  
րաւաւմք , որ Հռովմայեցոց սրտերուն մէջ մարած  
վախը՝ Միհրդատայ ձեռքով նորէն արծարծեց : —  
Հռովմայեցիք . մի կարծէք որ Հայաստանի կրնաք  
յաղթել . քանի որ յաղթաբազուկ Միհրդատ  
իր սայրասուր սուրը զշայաստան պաշտպանելու  
համար կը տարածէ , անհնար է ձեղ անոր վեաս  
մը հասցնել . քանի որ քաջազօր Միհրդատ սյս  
աշխարհիս վրայ կը չնչէ , ձեզի ուրիշ բան չ'մնար  
լնել , բայց եթէ ջարդուիլ , փախչել , հաշ-  
տութիւն լնել և բարեկամանալ : Դուք ամէն  
անցածող պատերազմէն վերջը զօրապետնիդ կը  
փոխէք , բայց ես կըսեմ որ յանցանքը զօրա-  
պետաներնուդ վրայ չէ . եթէ ձեր քովը ասիկայ  
յանցանք կը սեպուի , ուրեմն յանցանքը Հա-

յաստան Աշ աշխարհին է որ պյառիսի յաղթող  
արիւն կրող անձ մը ձեղի երևցոց : Հոսվ  
մայեցիք, եթէ ձեր բոլոր ժաղովուրդը իբրև զօ-  
րապետ Հայոց գենմ պատերազմի զրկեք, դար-  
ձեալ ապահով եղիք որ անոնց չէք կրնար յաղ-  
թել . քանի որ այս սերը, միաբանութիւնը և  
ցժը անոնց քով կը դառնուի :

(Ա) Կիրակար և Արտօնուն վրանեն բոռես ի՞ելնէն :

Ի՞նչպէս էք, տէր իմ. ցաւը անհետացաւ :

**ՄԻՃՐԴԱՏ.** Այսու գոհ եմ : — Պատերազմը կը շարու-  
նակեն կոր. Արագուն :

**ԱՐԱԳՈՒՆ.** Զէ . տէր իմ . զօրքերը ետ քաշուեցան :

**ՄԻՃՐԴԱՏ.** Եւ ինչու . լուած բան է որ մէկ անձի մը համար  
պատերազմը ետ ձգուի :

**ԱՐԱԳՈՒՆ.** Տէր իմ . անանկ անձի մը կեանքը բիւրաւոր պա-  
տերազմներու արժողութիւնը ունի :

**ՄԻՃՐԴԱՏ.** Բայց չէի ուզեր, Արագուն . որ մէկ վէրքի մը հա-  
մար ձեռք ձգուած յաղթութիւնը կորսուի :

**ԱՐԱԳՈՒՆ.** Տէր իմ . յաղթութիւնը տակաւին կրնայ ձեռք  
բերուիլ :

**ՄԻՃՐԴԱՏ.** Ուրեմն շուտով պատերազմի նշան տուր :

**ԱՐԱԳՈՒՆ.** տէր իմ :

(Արտօնուն իւ մէնին :)

**ՄԻՃՐԴԱՏ.** Ենորհակալ եմ քեզմէ, Տիմոթ . որ իմ վէրքս  
քիչ ժամանակուան մէջ առողջացուցիր, որպէս  
զի յաղթութիւնը անորոշ չ'մնայ :

**ՏԻՄՈԹ.** Բայց գեռ զգուշութեան կարօտութիւն ունի տէր  
իմ . զբաննուդ մէջ քիչ մը հանգստանալ պէտք  
էք :

**ՄԻՃՐԴԱՏ.** Ա բանիս մէջ հանգստութիւն չեմ կրնար ունենալ  
Տիմոթ . բայց պատերազմի դաշտին վրայ աղատ  
օդը շնչելով բոլորովին կը հանգստանամ ու կ'ա-  
ռողջանամ : Վիտցած ըլլաս Տիմոթ . որ մէկ  
ոչինչ վէրքի մը համար հայրենեացս օգուտը չեմ  
ուզեր ոտքի տակ առնուլ, և ասիկայ է կար-  
ծեմ հայրենասիրի մը արժանի գործը : Եթէ

վերքիս համար պատերազմի մէջ չմտնեմ, ան  
ամեն թէ հայրենասիրութեանս և թէ սպարա-  
պետութեանս պատիւք պիտի արատեմ, անոր  
համար թէ որ պատերազմի մէջ մն անդամ  
վոց հանի, գարձեալ աւելի նախամեծաբ  
կընարեմ:

(Ա՞է ի՞նչ) Ի՞նչ վիշանձն սէրս :

(Պատաժն պատերազմի գողերը ի՞նչ առաջնո՞ւն :)

ՄԻՀՐԴԱՏ. Պատերազմի նշանը կը տրուի :

(Լուսնուո՞ն ի՞ն մինէ :)

ԱՐԱԳՈՏՆ. Տէր իմ, ամեն բան պատրաստ է, զօրքերը նէ-  
տերնին լարած ձեր հրամանին կոսպատէն :

ՄԻՀՐԴԱՏ. Ուրեմն պատերազմը սկսիւք, հետեւ՝ ինձի :

(Ա՞է լուսն և լուսականները ի՞ն մինին :)

ՏԻՄՈԹ. (Վայոնին բան է որ յազմումիւնը սի-  
սի վաստին, որովհետեւ ասանկ անվիշեր ու  
բանիբուն զօրապետի մը գէմ գնելու չափ կա-  
րողութիւն չունին Հռովմայեցիք. ես ալ սա  
բարձր տեղեւն պատերազմին վիճակը դիտեմ:

(Ճայտէ մը Հրայ ի՞ննէ :)

*2882-57*  
Հայոց նետերը կարծես թէ բոլոր գաշտին վասց  
շուք կընեն, և ի՞նչպէս ուղղակի նպաստենուն  
կը հասնին . . . Անցէ՛ Սիհրդատ, ի՞նչպէս իր  
զօրքերը կը քաջալերէ . . . Հռովմայեցաց կողմէն  
եկուծ նետերը կը քիշան, ահաւասիկ կոկսին  
փախիլ . . . բոլորովին պաշարուեցան. ի՞նչպէս  
ամեն կողմէն չարդ կ'ուտեն . . . խեղճ Հռովմա-  
յեցիք. ցիրուցան ուր երթալինն չեն դիտեր . . .  
Փառաւոր յազմութիւն. Ահաւասիկ Սիհրդատ  
կու գայ . . .

(Ճայտէն Հրայէն Հոր ի՞ննէ :)

ՏԵՍԱՐԱՆ Դ:

ՄԻԶՐԻԱՏ, ԱՐԱԳՈՑՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐՈՎ, ԿԸ ՄՑՆԵՆ՝

**ՄԻԶՐԻԱՏ.** Հայոց դրօշակը ամէն տեղ յաղթող պիտի ծփայ:  
Վրագոտն, Արշակէս զօրագլուխը շուտով ինձի  
զըկէ:

**ԱՐԱԳՈՑՆ.** Կատ աղէկ տէր իմ...:

(Արագոտն էլ մէկնէ:)

**ՄԻԶՐԻԱՏ.** Դիխոես ինչո՞ւ համար կանչել կու տամ, Տիմօթ..  
**ՏԻՄՕԹ.** Ձէ՛, տէր իմ. գուցէ պակասութիւն մը բրած է  
պատժել կուզէք:

**ՄԻԶՐԻԱՏ.** Ձէ՛, ամենեին. չեմ կարծեր որ Արշակէս պատ-  
ժոյ արժանի գործ մը կընէ: Պատճառը այս է  
որ բանակիս մէջ եղած զօրքերէն կասկած ու-  
նիմ: Ահաւասիկ Արշակէս կու գայ:

(Արշակն և արագոտն էլ մտնեն:)

Արշակէս, շուտով հրաման ըրէ զօրքերուն որ ա-  
մէն մարդ իր վրանը առանձնանայ:

Կատ աղէկ, տէր իմ:

Ապասէ՛. ամէն մարդ իր տեղը քաշուելէն վերջը գուրս  
մնացողները ինծի իմաց տուր: Կուտով հիմա:  
Անմիջապէս, տէր իմ:

(Արշակն էլ մէկնէ:)

**ԱՐԱԳՈՑՆ.** Քանի մը անգամ դիխոեցի որ բանակիս մէջ եր-  
կու կողմէն շփոթութիւն մը ելաւ:

**ՏԻՄՕԹ.** Ի՞նչ էր արգեօք պատճառը:

**ՄԻԶՐԻԱՏ.** Անանկ կը կարծեմ որ զօրացս մէջ օտարական  
Հռովմայեցիներ փախչելով խառնուած են, եթէ  
այս կասկածս ստոյդ ելնէ՝ բոլորն ալ պիտի ո-  
չընչացնեմ:

**ՏԻՄՕԹ.** Իրաւունք ունիք ընելու, որովհետեւ ասանկ փա-  
խստականները պատերազմին տաքցած ժամա-  
նակ անանկ շփոթութիւններ կը հանեն, որ շատ  
անգամ ձեռք եղած յաղթութիւնը կը կորսուի:

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Տեսնե՞ք , աղէկ կիմանամ որ կասկածս ստոցդ է :  
 (Արշակուն էլ մոնե :)

ԱՐՃԱԿԵՍ .      Տէ՛ր իմ , քսանևվեց Հռովմայեցիներ մըր զօրաց  
 հետ խառնուեր են , որոնք դուրսը առանց վե-  
 րանի մնացին :

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Ըստով ամէնքն ալ մեռցնել տուր :

ԱՐՃԱԿԵՍ .      Ը ատ աղեկ , ուրիշ վտանգաւոր անձ մ'ալ կը  
 գտնուի տէր իմ :

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Ո՞վ է :

ԱՐՃԱԿԵՍ .      Ատափիոս , Հռովմայեցւոց ծերակուտի անդամը ,  
 որ գատաստանէն փախած ձեզի ապաւինած եր :

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Այո՛ , և ո՞ւսկից գիտես անոր վտանգաւոր ըլլալ :

ԱՐՃԱԿԵՍ .      Օօրքերէն իմացայ որ նցն խարդախ Հռովմա-  
 յեցւոց հետ մէկտեղ երեկ գիշեր դաւակցութիւն  
 կ'ընէր :

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Ըստով ինձի զրկէ , միւս Հռովմայեցիներն ալ  
 բոլորը թրէ անցուր , զօրքերը հանգստանան  
 և պատրաստուին ճամբայ ենելու :

ԱՐՃԱԿԵՍ .      Ը ատ աղեկ , տէր իմ :  
 (Արշակուն էլ մոնե :)

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Կը տեսնե՞ս կասկածս ստուգուեցաւ , Տիմօթ :

ՏԻՄՈԹ .      Քաջ ու խոչեմ պատերազմողի մը բոլոր ընտիր  
 յատկութիւնները ունիք , տէր իմ :

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Ատիկայ թէպէտ և չկրնար ըլլալ , բայց ասանկ  
 գէպքերու մէջ քիչ մը աչարջութիւն ունիմ :

ՏԻՄՈԹ .      Երջանիկ է Հայաստան , որ ասանկ դիւցազն մը  
 ունի :

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Զափաղանցօրէն կը խօսիս , Տիմօթ : Նիմայ ես կը  
 մնածեմ՝ որ Ատափիոս ալ մեռնի :

ՏԻՄՈԹ .      Անոր մահը օրինակ պիտի ըլլայ ուրիշներուն որ  
 ասանկ չար խորհուրդ մը մազերնէն չ'անցնեն :

ՄԻՀՐԴԱՏԱՏ .      Ատոց է , աչուասիկ ինքն ալ կու դայ , դէմքին  
 տիրութիւնը յայտնի կը ցուցնէ իր յանցաւոր  
 ըլլալ :

(Ատափիոս և Արշակուն էլ մոնե :)

Երկարօրէն գատաստան չեմ ըներ քեզի հետ-

Հարցմանս պէտք ես ճշմարտութիւնի պատասխաննել:

ԱՍՏԻՎԻՈՍ. Պատրաստ եմ ճշմարտութիւնը խոստովանելու:  
ՄԻՀՅԻԱՏ. Երեմի ականչալուր անձերէ իմացայ, որ երեկ գիշեր մէկ քանի զռովմայեցւոց հետ դաւաճանութեան խորհուրդ ըրեք ես:

ԱՍՏԻՎԻՈՍ. Ետիկայ սուտ է:  
ՄԻՀՅԻԱՏ. Բայց եթէ փորձով հաւաստելու ըլլամ ականատես վրայները կանչելով:  
ԱՍՏԻՎԻՈՍ. Ատախօս անձեր շատ կը գտնուին:  
ՄԻՀՅԻԱՏ. Հոռվայ ըլլալ որ անոնց մէջ ալ ստախօսներ գտնուինք  
ԱՍՏԻՎԻՈՍ. Որոնցմէ մէկն ալ դուն ես: (Երշակեան) կատարէ  
հրամանս:

ԱՍՏԻՎԻՈՍ. Ե՞նչ հրաման պիտի տաք որ կատարեն, տէր իմ:  
ՄԻՀՅԻԱՏ. Ինչ որ դաւաճանի մը համար կը տրուի:  
ԱՍՏԻՎԻՈՍ. Բայց կ'անիբաւե՛ք զիս այդ անունով:  
ՄԻՀՅԻԱՏ. Պա՛րոն, մէկ ժամ ունիք, ուրեմն աճապարեցէ՛ք  
վերջին խորքերնիդ արտասանելու:

ԱՍՏԻՎԻՈՍ. Ա երջին իօվելս ձեզի յանդիմանութիւն պիտի  
ըլլան թէ որ յանիբաւի զիս մեռցնել տալու գիտաւորութիւննիդ չփոխեք:

ՄԻՀՅԻԱՏ. Երեմի իրաւամբ դքեզ մեռցնել կու տամ, և քու  
ընելք յանդիմանութիւններն ալ իմբններուտ  
հետ խառնած՝ քեզի պէս ապերախտ անձի մը  
կը դարձնեմ: «Ո՛ւն» դատաստանի մը մէջ ներկայ չփանչելու համար՝ զռովմէն փախած ինձի  
ապաստանեցար, ես քեզ պաշտպանելով պատուվ պահանջեցի, պէտք եր ուրեմն որ քու բարերարիդ կենաց դէմ դաւաճանութիւն խորհիս:  
Կը կարծէիր որ Միհրդատայ կեանքը վերցնելով՝  
հայրենակցացդ քու վրայ ունեցած ատելութիւննին կը ջնջման: Բայց զիտանալ պէտք ես որ  
քու անօրէն միտքդ յաջողէր անգամ, Հայաստան մէկ քանի ուրիշ Միհրդատաներ կրնայ յառաջ բերել, զռովմայեցւոց ունեցած փախը ըսմարելու համար: Ոմէ որ ատիկայ աննշան քաղաքացւոց մը գործ ըլլար, գուցէ անոր անմտու-

թեան համար տալու պատիժս քիչ մը մեզմացնէն, բայց քեզի պէս նշանաւոր անձի մը երբեք չեմ ներեր, աղեկ զի նալով որ քաղաքացւոց դործերուն աղնուականք չեն հետեւիր. բայց աղնուականաց հարկաւ կը հետեւին քաղաքացիք և օրինակ կ'առնուն: Այս սպասեր որ խօսակցութեանս կերպը փոխեմ, որոշումնս հաստատ է:

ԱՏՏԻՎԻՈՍ.

Չէ թէ ես, այլ ունեցած պատիւս ձեր գութը շարժէ:

ՄԻՀՐԻԱԾ.

Եդ շարժմանըներով զիս աւելի կը զայրացնես: Գլատոյ ինչ ըլլալո առաջ գիտնալ պէտք էիր, չէ թէ հիմա: Որշափի ծոռւիս, աղածես. քու ապերախառութիւնդ պիտի պատժեմ: Ենիրառութիւն այն ժամանակ կընեմ, ինչ ատեն անիրաւի մը պատիժը չտամ:

ԱՏՏԻՎԻՈՍ.

Ուրեմն բան մը պիտի չշարժէ) ձեր գութը:

ՄԻՀՐԻԱԾ.

Արդարութենէ զատ: — Արշակէս. իմ հրամանս զօրաց առջեւ կատարէ, որպէս զի գաւաճանութիւն ընողին արժանի պատիժը տեսնեն: Ենից վերջը զօրաց պատուիրէ որ շուտով ճամբայ ելլնելու պատրաստուին:

ԱՐՃԱԿԻՍ.

Ե աս աղեկ, տէր իմ:

(ԱՅԻՆՐԴ-ԿՐԱՆԵ Է ԲՐԱԿԻ:)

Քալեցէք, պարոն:

Ո՞ւր:

Ուր որ Այնիրդատ ակրերնիս հրամայեց տանելու:

Գերեզման:

Ատիկայ ուրիշին պաշտօնն է:

Ե՞նչ է ուրեմն քու պաշտօնդ. Ե՞նչ կ'ուղես ինձմէ:

Կեանդդ:

Ե՞ս . . .

Ե՞նւա ըրէք, պարոն որպէս զի վշտերնիդ թեթևնաց:

ԱՏՏԻՎԻՈՍ.

Ե՞նպէս կը համարձակիս ինձի պէս աղնուական հառնայեցի մը մահուան հրաւիրելու:

ԱՐՃԱԿԻՍ.

Օքուշացիք այդ խօսքը միւս աշխարհին մէջ կընել:

- ԱՅՏԻՎԻՈՍ . Խնչու պիտի չ'կրկնեմ քանի որ աղնուական եմ :  
ԱՐՃԱԿԵՍ . Որովհետև աղնուական անունը քեզի համար պար-  
սաւ մնն է ու պիտի ըլլայ : Ի՞այց ժամանակ չ'կոր-  
ուունցնենք :
- ԱՅՏԻՎԻՈՍ . Ի՞այց ի՞նչպէս կը համարձակիս :  
ԱՐՃԱԿԵՍ . Ի՞նչպէս համարձակեցար :  
ԱՅՏԻՎԻՈՍ . Ի՞նչ բանի :  
ԱՐՃԱԿԵՍ . Դաւաճանելու :  
ԱՅՏԻՎԻՈՍ . Ո՞վ աստուածներ :  
ԱՐՃԱԿԵՍ . Մի՛ խռովեր ասսուածներդ ,  
ԱՅՏԻՎԻՈՍ . Ի՞այց դիսցած ըլլաս որ վրէժը կ'առնուն :  
ԱՐՃԱԿԵՍ . Այս՝ գիտեմ . ինչպէս որ քեզմէ կ'առնուն :  
(Արշակ հեղարնե ու իւ փոե զպն :)  
ԱՅՏԻՎԻՈՍ . (Անդայ գեղին իյնալով) ԱՇ . . .  
ԱՐՃԱԿԵՍ . Կանչէ հիմա աստուածներուդ օգնականութիւնը :  
(Պահապահաց) Օ օրաց առջև՝ տարեք դիմելք :  
(Էւ Թէնէ)

ՊԱՐԱԳԱՅԵՐԸ ԿԸ ԳՈՅՈՒՄ :

## ԱՅՏԻՎԻՈՍ Բ.

### ՏԵՍԱՐԱՆ Ա:

- ՊՐԻՑՈՒՄ ՄԻԶ ՄԻՋՐԴԱՑԱՅ ՊԱԼԱՏԸ . ՄԻՋՐԵՆ ԵՒ ԶԱՐԵԿ ՆՍՏԱԾ :
- ԶԱՐԵԿ . Միհրդատ տէրերնիս այս դժբաղդութեանց վրայ  
յետին աստիճան կը ցաւի :
- ՄԻՋՐԵՆ . Իրաւունք ունի ցաւելու : Կը յիշեմ Զարեկ Պու-  
կուղղսի և Պոմպէոսի հետ ըրած երեկիլ պա-  
տերազմները , որոնց շատ և գրեթէ ամեն ան-  
գամ յաղթեց . և հիմա ի՞նչպէս չ'ցաւի այս  
տիսուր պարագաներուն վրայ , որոնց բոլորովին  
անակնկալ եր :

- ԶԱՐԵՀ.** Բայց զգացած ցաւը իրեն անգթութիւն կը պատճառէ կոր:
- ՄԻՃՐԱՆ.** Խնչո՞ւ:
- ԶԱՐԵՀ.** Հապա և ոչ իրեն սիրելիներուն կը խնայէ ու մեռցընել կ'ու տայ:
- ՄԻՃՐԱՆ.** Գիտցած ըլլաս, Զարեհ, որ անոնք սիրելի չեն, հապա սիրելի կարծուած. ու թեթև հով մը տեսնելնուն պէս՝ իրենց առագաստները կը պարզեն. կը հասկընան ըսածս:
- ԶԱՐԵՀ.** Ծառ մութ կերպիւ կը խօսիս:
- ՄԻՃՐԱՆ.** Ուտի՞լ ըրէ ուրեմն. կրնան ժխտել ու ըսել թէ Կաստոր Ցողակ և ուրիշ մէկ քանի ապերախտ աւագանիներ Միհրդատայ սիրելիները չէին. կրնան ասիկայ մերժել: Բայց ես կ'ըսեմ որ անոնք սիրելի չեին. Հապա միայն սիրելի կարծուած: Ուրեմն անգթութիւնն կը սեպես անիրաւներու տրուած պատիժը տեսնելով: Այն իշխանին սիրու որ չափազանց գթասիրտ է. գիտցած ըլլաս որ աէրութիւնն ալ վաղանցուկ ու անհաստատ կ'ըլլայ:
- ԶԱՐԵՀ.** Ուրեմն այդ ըսածէդ կը հետևէ որ իշխանները անգութ ըլլալ պէտք են:
- ՄԻՃՐԱՆ.** Կը սիսալիս բոլորովին: Պէտք է աղատ թողուլ այն անձը՝ որուն վրայ գթալով տէրութեան լինաս պիտի պատճառի. այս կերպ գութը անգթութիւն հայրենեաց է:
- ԶԱՐԵՀ.** Ծնտարակշյու:
- ՄԻՃՐԱՆ.** Ուրեմն Միհրդատայ համար ալ անուանածդ անգընթութիւնը այս կերպ է: Ծառ գթասիրտ է անսնց ու կը խղճայ անանկներուն վրայ, որոնք իրաւացի են ու անմեղ: Բայց յետին աստիճան անգութ է անոնց՝ որոնք անիրաւ են ու մեղապարտ. և ասիկայ է իշխանի մը արժանավայել գործ: Ծխանկ է ըսածս թէ չէ:
- ԶԱՐԵՀ.** Ծխակ է:
- ՄԻՃՐԱՆ.** Փանաքորինն քաղքին տխուր դէպքերը սիրոս այնչափ տրամեցուցին ու զայրացուցին, որ ես անգամ եթէ պատժելու իշխանութիւն ունենայի

շատ անձեր պիտի զոհէի իմ իրաւացի բարկու-  
թեանս :

**ԶԱՐԵԿ.**

**ՄԻՀՐԱՅ.**

Վայդ աստիճան սիրտդ շարժած է :

Քու կարծածէդ աւելի : Բայց որպէս զի դուն ալ  
ճիշդ տեղեկութիւն մը ունենաս Փանաքորիոնին  
վրայ, Հոնիկց եկած նամակ մը քեզ կարդամ,  
և այն ժամանակ քու խղճմանկովդ դատէ :

(Կարդանէն նամակ մը էլ հանէ :)

**Մարկ ըրէ :**

(Ա'սէսէ էաբդալ :)

« ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՍ :

Ա արանք, տարակուսութիւն, ցաւ, կսկիծ,  
ոգութ, բոլոր լնդարմացնող կիրքերը վրաս  
կը բռնանան, ու զիս այն յուշագրաւ դառ-  
սակսկիծ վիճակին մէջ կը ձգեն . որուն մէջ  
բոլորովին յայլյայլմէ եղած՝ Փանաքորիոն պերձ  
քաղաքին տիսուր ու աղետալի դէպքերը քեզ  
կը նկարագրեմ . . բայց աչաւասիկ տարակու-  
սութիւնը զիս կը պաշարէ, ու անկարու կ'ընէ  
նամակս ըստ օրինի շարունակելու, դէպքերը  
այնչափ ցաւալի ու սոսկալի են, որ բոլորովին  
կը շփոթիմ նամակիս սկիզբը դտնելու . . ուս-  
կից սկսիմ գրել . ո՞ր դէպքերը իմ դողդոջուն  
գրիչովս նկարագրեմ . . Փանաքորիոն չկայ ալ .  
այն գեղեցիկ շենքերուն տեղ մարդուս աշ-  
քին կը ներկայանան բոլոր կողմը ցցցուած  
աւերակներուն մերկ ու այրա՛ծ պատերը . .  
» Ի՞նչ սոսկալի ժամ էր անիկոյ, բարեկամն,  
ինչ ատեն քաղաքին բոլոր անկիւններէն փոխա-  
նակ սովորական ինդութեանց ձայներու, աղ-  
մուկ, խռովութիւն, լաց, վայնասունք, ա-  
րիւն, սուր, և ամենէն վերջը՝ իբրև զամենքը  
գերազանցող տոշորակէլու ու լայնածաւալ հրոյ  
զիշատիչ գաղանի մը պէս աչուելի մննչիւնը  
կը լսուէր : Ինչ սոսկալի ժամ էր այն, ինչ

“ատեն իսաղաղ ծովի մը նմանող քաղաքը՝ մը  
“ըրբկածուփ ու լեռնակուտակ Ովկիանոսի մը  
“կը գառնար : Խ՞նչ սոսկալի ժամ էր ան՝ որ  
“մարդիկ լավիեղող մահագյոյժ կրակէն պաշար-  
“ուած՝ ՚ի զուր ապաստանարան կը փնտուէին :  
“Խ՞նչ սոսկալի ժամ էր ան՝ այն ինչ մէկ կող-  
“մէն կենազըաւ պողպատը կը շողար, և միւս  
“կողմէն անընդդիմակ բոցաւորեալ տարրը ան-  
“սահման կը ճարակէր : Խ՞նչ սոսկալի ժամ էր  
“ան, ինչ ատեն բռնաւոր ձեռքեր մինչեւ ան-  
“դամ Միհրդատայ որդւոց վրայ ծանրանալու-  
“յանդգնեցան, ու զանոնք շատ բաներու հետ  
“մէկաւեղ Հռովմայեցւոց մատնեցին : Վ մենասու-  
“կալի ժամ, աննկարագրելի՛ դէպք ... գուցէ  
“ասոնց ամենուն պատճառը հարցնես թէ ո՞վ  
“է, տիրաննենք մը, ապերախտ մը, մատնի՛չ  
“մը . . . ասոնց ամենը կը նշանակեն թէ կաս-  
“տորն է . . . կաստոր այն ապերախտ անձը՝ որ  
“Միհրդատէն շատ անդամ անթիւ բարիք ըն-  
“դունած է . . . կաստոր այն երախտամոռ ու  
“ազգատեաց անձը՝ որ բուռ մը անարդ մետաղէ  
“համար . առաքինութիւնը, հաւատարմութիւնը,  
“ընդունած երախտիքները ու հայ անունը աղար-  
“տեց ու բոլորը ոտքի տակ առաւ . . . :

(Դարդելու) Վ միոզջ չեմ կարդար . մանա-  
ւանդ թէ չեմ կրնար, բայց դուն Փանաքորիո-  
նին դէպքերը՝ և անոնց պատճառը ո՞վ ըլլալը  
իմացար, զուցէ ուրեմն հիմա ինծի . եթէ դուն  
Միհրդատայ տեղ ըլլայիր, միթէ քու իրաւացի  
բարկութեանդ շատ անձինք զոհ պիտի չըլլայի՞ն :

Եթէ յանցաւոր գանէի զանոնք :

Ուրեմն կրնաս ըսել որ պատճուածներուն մէջ ան-  
մեղներ կը գտնուին :

Եթէ վնստուելու ըլլանք :

Ուրեմն արտօնութիւն քեզի . դոիր անմեղ մէկը :

Գոռայրը :

Ո՞վ :

Գոռայրը :

- ՄԻՃՐԱՆ . Հօրեղբայրդ :
- ԶԱՐԵԿ . Այս յոր Միհրդատ յանիրաւի բանտարկել առւաւ ;
- ՄԻՃՐԱՆ . Աման կ'իմանամ թէ ճշմարիտ հայրենասիրի մը սիրու  
չունիս : Արնան զրուցել որ հօրեղբայրդ յան-  
ցաւոր չէ :
- ԶԱՐԵԿ . Կրեթէ կրնամ :
- ՄԻՃՐԱՆ . Ուրեմն բոլորպլին կը ստես . զգուշացիր ատիկայ  
ուրիշ մէկու մը քովլ ըսելէ :
- ԶԱՐԵԿ . Բայց ինչո՞ւ համար Գոռայր բանտարկուի :
- ՄԻՃՐԱՆ . Ծառ որում յանցաւոր է . և գուն պէտք չես այս  
բանէս գանգատիլ :
- ԶԱՐԵԿ . Խնչո՞ւ :
- ՄԻՃՐԱՆ . Ուսվէեաւ չեմ կարծեր որ Միհրդատ միայն բան-  
տարկելով գոհ կ'ըլլայ :
- ԶԱՐԵԿ . Բայց Գոռայր յանցանք մը գործած չէ :
- ՄԻՃՐԱՆ . Օքրեհ , չգիտցողի մը քովլ խօսէ այդ բանը :  
Գաղտնի նամակները շատ անդամ բռնուած են .  
և գուն պէտք չէիր անոր կողմնակից ըլլալ :
- ԶԱՐԵԿ . Եւ չե՞նք կրնար Միհրդատայ բարկութիւնը իջե-  
ցընել :
- ՄԻՃՐԱՆ . Այս կողմէն ՚ի չնորհս բանտարկելցն արտասա-  
նուած մէկ քանի խօսքերը , աղէկ գիտցած ըլլաս  
որ ասանկ նեղ պարագայի մը մէջ մէր կենաց  
արժողութիւնը ունին :
- ԶԱՐԵԿ . Ուրեմն հօրեղբայրս կորաւած է :
- ՄԻՃՐԱՆ . Իր անարդ գործերը վիճքը կորսնցուցին . ասանկ  
անձի մը վրայ և ոչ անդամ կը խղճամ :
- ՄԻՃՐԱՆ . Ուրեմն անոր մահը կ'ուզես :
- ՄԻՃՐԱՆ . Ես ոչ ապրեցնելու իշխանութիւն ունիմ և ոչ  
մեռցնելու : Բայց ասանկ ատենի մը մէջ այս  
կերպ խօսակցութիւնը շատ վաանդաւոր է . ես  
կ'ուզեմ երթալ :
- ԶԱՐԵԿ . Կ'աղաշեմ սպասէ քիչ մը :
- ՄԻՃՐԱՆ . Բայց ինչո՞ւ զիս կ'արգելուս . չեմ ուզեր անձս ու  
սպատիւս վտանգի մէջ դնել : ՚Քանի որ ասանկ  
մարդու մը կողմնակցութիւն կ'ընես , ուրեմն ը-  
սել է որ հայրենասիրութիւն չ'ունիս : Խակ ես  
ինծմէ կեանք առած զառակս անդամ իմ ձեռու-

- քովս կը մեռցնեմ . ի՞նչ ատեն անոր հայրենեաց  
վլաս հասցնելը ու դաւաճանութիւնը տեսնելու  
ըլլամ :
- ԶԱՐԵՀ . Կերեցէք . ատիկայ ալ յետին աստիճան անդժու  
թիւն է :
- ՄԻՃՐԱՆ . Ուրեմն ձեր ըրածն ալ յետին աստիճան հայրե-  
նասեցութիւն է :
- ԶԱՐԵՀ . Պարոն , զգուշացիր ունեցած բարեկամութիւնս  
վտանգի մէջ դնել :
- ՄԻՃՐԱՆ . Հայրինատեաց մէկումը բարեկամութիւնը չարա-  
կամութիւն է : Ի՞նչ այդպէս կիբրով կը խօ-  
սիս , հօրեղբայրդ յանցաւոր է . կ'ուզես որ ա-  
սանկ մէկումը կողմնակից ըլլալով՝ կեանքս  
վտանգի մէջ դնեմ : Քեզմէ զատ անոր վրա-  
յօք ուրիշն գանգատ չեմ ըներ . բայց նոյնպէս  
գովութեամբ ալ չեմ կրնար խօսիլ : Ծաէպէտ  
և քու հօրեղբայրդ է . բայց գուն ալ իմ օրի-  
նակիս հետեւիլ պէտք ես . թէ որ Ճշմարիտ հայ-  
րենասիրի մը վարմունքը ունենալ կ'ուզես : Վ-  
ելի երկար չեմ կրնար չոս սպասել . վախնարով  
որ գուցէ Միհրդատ յանկարծ կ'ու գայ և զեղզ  
հոս կը գտնէ : Ետակէ ինձ . ես պիտի երթամ :
- ԶԱՐԵՀ . Բայց հօրեղբայրո :
- ՄԻՃՐԱՆ . Ուրեմն սպասէ որ զայն ազատես , գուն չես կրնար  
կոր գուշակել այն վտանգը , որ ասանկ ատեն-  
ուան մէջ այդ կերպ խօսակցութենէ կը պատ-  
ճառի : Ո՞ի արտասաներ երբէք հօրեղբօրդ ա-  
նունը . եթէ ոչ անձինդ ալ կը վեասես : Բայց  
ես պէտք եղած տեղերը դարձեալ կը խօսիմ , որ-  
պէս զի ելմէ չնար է գոռացր աղատի : Գալէ  
հիմա երթանք :

(Եւ Եղինէն :)

ՏԵՍԱՐԱԿՅԱ

ՄԻՀՐԱՎԱՏ ԱՌ Մ Տ Ն Է :

ՄԻՀՐԱՎԱՏ .

(Վարանյին . ալուստի ճը կը հայ էլ նապի : ) Վնոնք որ իւրենց հայրենեաց կը ծառայեն , զայն զարդացը նելու կը ջանան . կեանքերնին վոանդի մէջ գնելով՝ անոր օգուտը կը պաշտպանեն . ասանկ ներուն վերջին վիճակը անանկ ցաւալի է , անանկ դժուարատար . որ մահը անոնց աչքին առջե բարիք մը կ'երևայ . ինչպէս ալ հիմա ինձի : Վ. յն անձերը՝ որոնց վրայ աւելի շատ խնամք կը տանիմ , կը պատուեմ , կը պաշտպանեմ , ինձի համար որոգայթ լարելու կը ջանան . Հայաստանի փառքը մարելու կ'աշխատին . ատելութիւնը , նախանձը , շահախնդրութիւնը ամեն գործոց մէջ իրենց առաջնորդ կ'ընտրեն : Խոչպէս կրնամ այս կերպ անիրաւութեանց դիմանալ . Ենչպէս կրնամ ասանիներուն ներողամիտ ըլլալ . անհնար է : Պեսո բանտին մէջ բաւական անձեր կան , որոնց խարդախութիւնը աղէկ փորձած եմ , մանաւանդ այս միջոցիս մէջ . որոնց ամենքն ալ այսօր իրենց հրաժարականը աշխարհի պիտի տան :

Վն գոռայրը , ան ապերախտ անձը . քանիք քանի անդամ ինձմէ շնորհք գտած չէ արդեօք . քանիք քանի անդամ ինձ երախտապարտ կենալու առիթներ տուած չ'մ արդեօք : Եւ հիմայ պէտք էր որ կաստորի հետ նամակով խորհրդակցեր . պէտք էր որ կենաց դէմ դաւաճանութիւն խորհրդ . պէտք էր առաքինութիւնը ասանկ ոտքի տակ առնուլ . բայց առաւ . ուրեմն թողէ երկինք ալ իրեն կեանքը առնու : Ովկ կայ դուրսը :

(Օ՞ստայ ճը էլ մոնէ :)

Հրաշեայն ինձ դրկէ :

ԴԱՌԱՅ .

Հատ աղէկ . տէր իմ :

(Օ՞ստայն էլ մէնէ :)

- ՄԻՀՐԴԱՏԱՏ.** Հրաման պիտի տամ որ բոլոր բանտին մէջ եղաղացները գլխատուին, որպէս զի միւսները անոնց արժանի պատիժը տեսնելով՝ անոնց օրինակին հետեւելու յանդգնութիւնը չունենան :
- (Հրապան իւ մոնէ պինեալ ու պատարը յեւուը բանած :)
- ՀՐԱԶԵԱՏ.** Տէր իմ. ձեր հրամանին կ'սպասեմ :
- ՄԻՀՐԴԱՏԱՏ.** Կիտես որ ինծմէ առածդ հրամանը միօրինակ է :
- ՀՐԱԶԵԱՏ.** Այս, տէր իմ. բայց կ'սպասեմ որ այն անձը արտասանէք՝ որուն վրայ ձեր հրամանը կատարուի :
- ՄԻՀՐԴԱՏԱՏ.** Ուրեմն բոլոր բանտին մէջ եղողներուն վրայ իմ հրամանս կատարէ :
- ՀՐԱԶԵԱՏ.** Հաճեցէք տէր իմ. բանտը որոշելու :
- ՄԻՀՐԴԱՏԱՏ.** Այն բանտը՝ որուն մէջ տէրութեան վեաս հասցնել ուղղողները կ'արգիլուին :
- ՀՐԱԶԵԱՏ.** Կատ աղէկ, տէր իմ. հիմա հրամաննուդ կատարուիլը անձամբ կու գամ կ'իմացնեմ :
- (Հրապան իւ մոնէ :)
- ՄԻՀՐԴԱՏԱՏ.** Խոնդ սովորին հայրենեաց դէմ չարիք գործելնուն հետեւանէքը. սիրտս այնչափ խռոված է որ յանցաւորաց և ոչ մէկուն պիտի խնայեմ :
- (Արտադրան իւ մոնէ :)
- Ի՞նչ բանի համար կու գաս, օրիորդ.** Քու շարժանունքներդ յայտնի կը ցուցնեն որ ամենազժուար աղերս մը ունիս ընելու. և արդէն կ'իմանամ անոր ինչ կերպ ըլլալը: Բայց քու սկսելէդ առաջ ևս քեզի կ'իմացընեմ որ անհնար է խընդրոյդ կատարուիլը. և խրատ կուտամ քեզի որ անմիջապէս տեղդ դառնաս ու բարկութիւնս աւելի չգրգռես:
- ԱՐՏԱՇԻԱ.** (Օ՞նկան Հրայ Հալով) Խի՞ղճդ չէ թէ բարկութիւնդ գրգռելու կու գամ. իշխանի մը համար ամենազիւրին է մարդ մը սպաննել տալ. և ասիկայ իրեն աւելի պարսաւ քանթէ պատիւ է. բայց ալ աւելի գժուար է և գովութեան արժանի, ինչ տտեն մահուան դուռը հասած մարդուն աւ

զատութիւնը շնորհելու ըլլայ : Եթէ իմ հայրս  
անու պահանջ մեռցնես՝ անգութ անուան արձագանգը բոլոր  
Պատուի մէջ պիտի հնչուի . եթէ անոր ազա-  
տութիւնը շնորհես, դժասիրս ու վեհ անունը  
ամէն տեղ պիտի արտասանուի .

Չեմ կրնար ըսել թէ հայրս յանցաւոր չէ .  
բայց իրեն այս բանտարկութիւնը թ՛ղ իրեւ  
պատիժ վերջանայ : Այդ իշխանութիւնը չէ թէ  
միայն մարդ մեռցնելու համար ձեզ արուեցաւ,  
հապա ապատելու համար ալ : Ուողութիւն տուր,  
ներէ գոռայրին . ո՞լ քաջ իշխան :

**ՄԻՃՐԴԱՏ.** Ելիք . ելիք . որչափ ծոռւիս խոնարհս անօգուտ  
է . համարձակէ բառ մը անգամ արտասանելու  
քու հօրդ պաշտպանութեանը համար, և պիտի  
տեսնես որ շատ սուզի պիտի նստի : Պատիժը  
դուն չես կրնար արգելուլ . արտասանէ մի միայն  
մէկ խօսք մը, և այս իրաւացի պատիժը քու  
վրադ ալ պիտի փոխադրուի : Խմն է այն, իմ  
իշխանութեանս տակն է անիկայ . ես կարող եմ  
զայն ապրեցնել կամ մեռցնել . բռնել կամ  
արձակել . գլխատել կամ կախել . ես կ'իշխեմ  
անոր վսայ . իմ ծառած է . իմ գերիս . խոկ հիմա  
իմ թշնամիս ու հակառակորդս :

Ելիք . օրիորդ . հօրդ անարժան ու անարդ  
գործը պէտք էր որ պատժուի . դաշտնի դա-  
ւակցութիւն ընել, կաստորի գործոց կամնակից  
ըլլալ . ինչպէս կրնաս ասանկ թշուառականի  
մը համար ազատութիւն խնդրել : Եթէ զհայրդ  
